նի որ, նորը դուրս գալուց յետոյ, նա ինքն իրան կը թառամի եւ ցած կը թափոի:

— Նրա համար պէտք է շտապել, որ հինը կտրելով, նորը աւելի շուտ է աճում:

Նրանց վիճաբանութիւնը ընդհատոեցաւ: Լսելի եղաւ դռան ձայնը:

— Անպատճառ տէր հայրը կը լինի, — ասաց վարժապետը: — Նա սովորութիւն ունի ամէն առաւօտ, ժամից դուրս գալուց յետոյ իմ սենեակը մտնել եւ սուրճ խմել:

Նա գնաց դուռը բաց անելու: Այդ միջոցին Ասլանը հաւաքեց գրասեղանի վրայ թափոած թղթերը եւ կողպեց արկղիկի մէջ: Եւ իրաւ, ներս մտաւ տէր հայրը, ռեսին իր հետ բերելով: «բարի ողջոյնէ եւ «Ողորմեայ աստուած» ասելով, նրանք նստեցին վարժապետի մահճակալի վրայ: Հարցնում էին, թէ ինչպէ՞ս անցկացրեց պարոն բժշկապետը գիշերը, արդեօք հանգի՞ստ էր, լաւ՞ քնեց, թէ անհանգիստ եղաւ: Ասլանը յայտնեց իր շնորհակալութիւնը: Յետոյ սկսեցին խօսել այն բանի վրայ, թէ եկեղեցում այս առաւօտ՝ այսինչ տիրացուն՝ այնինչ շարականը շատ լաւ երգեց, թէ նրա ձայնը օրըստօրէ ախորժելի է դառնում եւ, ընդհակառակն, միւս տիրացոի ձայնը փչանում է, երեւի, շատ խմելուցն է, եւ վերջ ի վերջոյ այն եզրակացութեանը հասան, որ նրան պէտք է արգելել, որ չխմէ:

Վարժապետը ոչ ծառայ ունէր եւ ոչ՝ աղախին. նա ինքն էր մաքրում իր սենեակները, ինքն էր պատրաստում իր կերակուրը, ինքն եւս սկսեց թէ իր հիւրերի եւ թէ մեզ համար սուրճ պատրաստել: Ծառայ չպահելը բացատրում էին նրա չափազանց համեստ եւ անփափկասէր կացութեամբ: Գուցէ գլխաւոր պատճառն այն էր, որ նա չէր ցանկանում իր մօտ երկրորդ աչքեր ունենալ: Նրան երբեմն օգնում էր եկեղեցու ծերունի ժամկոչը, որ երկոյ ականջներից եւս խուլ էր, եւ աչքերը վատ էին տեսնում: Այս առաւօտ նա չյայտնոեցաւ, որովհետեւ եկեղեցում իր գործը դեռ չէր վերջացրել: Միեւնոյն սենեակի վառարանի մէջ կրակ կար: Այնտեղ վաղուց արդէն եփ էր գալիս սուրճը. մի այլ ամանում տաքացրած էր կաթը: Երբ նա լիքը բաժակները դրեց մեր առջեւ, յետոյ բաց արեց իր սենեակի պահարաններից մէկը, այնտեղից դուրս բերեց սպիտակ հաց, սէր եւ կարագ նախաճաշիկի համար: Սէրը եւ կարագը ընծայել էին նրան հովիւները, որոնց մօտ էր գնացել նախընթաց օրը, բայց տէր հայրը արգելեց այդ վերջինները սեղանի վրայ դնել, ասելով.